ծրագիր

բարդ անցյալի դպրոց

2025

CULTURAL & SOCIAL NARRATIVES LABORATORY

WOMEN'S FUND ARMENIA

NEW DEMOCRACY FUND

DANISH CULTURAL INSTITUTE

WODS

ԲԱՐԴ ԱՆՑՅԱԼԻ ԴՊՐՈՑ

«Բարդ անցյալի դպրոցը» CSN Lab-ի ամենամյա այլընտրանքային կրթական ծրագիրն է: Այն նպատակ ունի խթանել քննադատական մտածողությունն ու հանրային երկխոսությունը անցյալի մշակութային և քաղաքական բարդ խնդիրների և արդի իրականությունում դրանց ազդեցության շուրջ: Քննարկումների, դասախոսությունների, աշխատարանների և երկխոսության վրա հիմնված ծրագրերի համադրությամբ դպրոցը ստեղծում է հարթակ՝ Հայաստանի և տարածաշրջանի բարդ անցյալի շուրջ խորհելու համար:

Նախորդ տարիներին «Բարդ անցյալի դպրոցը» անդրադարձել է կարևոր խաչմերուկվող թեմաների՝ հիշողություն և քաղաքային միջավայր, փախստականություն և միգրացիա, ապագաղութացում և նեոգաղութացում, գենդերային հավասարություն և այլն: Անցյալի քննության միջոցով մենք ձգտում ենք ձևավորել հիշողության նկատմամբ թափանցիկ և ժողովրդավարական մոտեցում և ստեղծել ընդգրկուն, հորիզոնական միջավայր՝ հասկանալու անցյալի այն պատումները, որոնք ձևավորում են մեր ներկան:

ԲԱՐԴ ԱՆՑՅԱԼԻ ԴՊՐՈՑ. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

Անցյալը քննադատորեն հարցադրելուն և արդի համատեքստում դրա ազդեցությունը վերլուծելուն միտված ԲԱԴ ծրագրի այս տարվա թեմատիկ առանցքում շրջակա միջավայրն է՝ բնական լանդշաֆտն ու քաղաքները, կանաչ ու կապույտ (ջրային) տարածքները, սոցիալական ու կլիմայական արդարությունը:
Հետզհետե սրվող միջավայրային խնդիրների՝ ներառյալ կլիմայի փոփոխության, բնական գոտիների ջենտրիֆիկացիայի, դեգրադացիայի և աղտոտման համատեքստում, մինչ օրս տարածված է հանրային ընկալումը, թե շրջակա միջավայրին առնչվող հարցերը և մտահոգությունները միայն էկոլոգիական մարտահրավերներ են:
Դրանց մշակութային, քաղաքական, սոցիալական և գենդերային ազդեցությունը դուրս է մնում հանրային և երբեմն նաև մասնագիտական/փորձագիտական խոսույթից: Արդյունքում մեր հարաբերումը բնական լանդշաֆտի հետ շարունակում է ձևավորված մնալ գաղութային անցյալի, անհավասարության և բռնության բարդ ժառանգությամբ, որը դառնում է հիմք նեոգաղութային հայացքների և գործընթացների:
Այս տարվա միջառարկայական ծրագիրը հնարավորություն է տալիս դպրոցի մասնակիցներին ընդգրկուն կերպով հարցադրել շրջակա միջավայրը, առաջարկելով՝

- Տեղական դիտանկյուններ. խորհրդային գաղութատիրության ժառանգությունը և դրա ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա
- Համաշխարհային դիտանկյուններ. ջրային գոտիները՝ որպես մշակութային և սոցիալական կյանքի ձևավորման կարևոր միջավայրեր:
- Բնապահպանական շարժումները. ակտիվիզմը և համայնքային դիմադրությունը Հայաստանում:
- Արվեստ և շրջակա միջավայր:
- Ֆեմինիստական տեսություններ և շրջակա միջավայր. հիդրոֆեմինիզմ և ֆեմինիստական ուրբանիզմ:

Խորհրդատու

Տիգրան Ամիրյանը

«Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիայի» հիմնադիրն է: Նա բանասիրական գիտությունների թեկնածու, մշակութային հետազոտող, սեմիոլոգ, համադրող: Նա հեղինակ է բազմաթիվ միջգիտակարգային հետազոտական նախագծերի և գիտական հոդվածների, որոնք անդրադառնում են քաղաքային տարածության փոխակերպումներին, բնական միջավայրի գաղութացմանը, մշակութային և սոցիալական հիշողությանը:

Մարի Չաքրյան

Մարի Չաքրյանը էկոլոգ է, դասախոսում է բնահեն լուծումների և կայուն զարգացման թեմաների շուրջ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի Բույսերի բազմազանության և էկոհամակարգերի ուսումնասիրության ամբիոնում: Նրա ընթացիկ հետազոտություններն ուղված են բնահեն լուծումների ներդրմանն ու դրանց միջոցով Հայաստանի քաղաքների կլիմայադիմացկունության բարձրացմանը:

Արսեն Աբրահամյան

Արսեն Աբրահամյանը ճարտարապետ է և մշակութային հետազոտող, Ամստերդամի համալսարանի ասպիրանտ: Նրա հետաքրքրությունների շրջանակը ներառում է ուրբանիստական տարածքների փոխակերպումների և դրանց պատճառների, քաղաքային միջավայրերի և հանրային կառուցվածքների փոխհարաբերության, ինչպես նաև ճարտարապետության և քաղաքային տարածության սոցիալական և մշակութային հիշողության հիմնահարցերը:

Գնդակներ

Հարություն Թումաղյան

Հարություն Թումաղյանը կոնցեպտուալ արտիստ է, նկարազարդող և հեղինակ: Ունի բազմամյա փորձ մանկական գրքերի ոլորտում, համահեղինակել և նկարազարդել է հեքիաթներ ու գրաֆիկ էսսեներ՝ ազատության և ժողովրդավարության, քաղաքային տարածքների և միջավայրային մարտահրավերների շուրջ: Նա ակտիվորեն ներգրավված է նաև մի շարք քաղաքացիական և մշակութային կազմակերպությունների համար տեսողական լեզու և հայեցակարգ մշակելու աշխատանքներում:

Օլիվիե Փեսթիո

Օլիվիե Փեսթիոն ապրում և աշխատում է Բրյուսելում, Բելգիա: Ճարտարապետության և փիլիսոփայության ոլորտներում ունեցած միջգիտակարգային կրթությամբ, ինչպես նաև մեդիայի և սոցիալական աշխատանքի ոլորտներում ունեցած բազմազան փորձով, Օլիվիե Փեսթիոն հանրային ակտիվ ներգրավմամբ միավորում է հետազոտական աշխատանքը, արվեստն ու իրավունքը, բարձրաձայնելու միջավայրային խնդիրները և նպաստելու քաղաքային տարածքների վերակազմավորմանը:

Դամլա Բարընն

Դամլա Բարընը սոցիոլոգ է: Նա Հրանտ Դինքի հիմնադրամում աշխատում է որպես հետազոտող և «Մշակութային ժառանգություն» ծրագրի համակարգող: Նա մասնակցել է «KarDes. Բազմամշակութային հիշողության զբոսավար» նախաձեռնությանը: Դամլա Բարընի վերջին հետազոտությունները մասնավորապես ուսումնասիրում են Ստամբուլի ջրային ժառանգությունը՝ դրա դերը ինչպես քաղաքային, այնպես էլ մշակութային ու սոցիալական հյուսվածքում:

Գնդակցություն

Էվիյա Հովհաննիսյան

Էվիյա Հովհաննիսյանը ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտ է: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է էթնո-քաղաքական հակամարտությունների և ազգայնականության, ինքնության, միգրացիայի և փախստականության, ինչպես նաև ենթակառուցվածքների թեմաները:

Դարյա Ցիմբալյուկ

Դարյա Ցիմբալյուկը միջգիտակարգային հետազոտող է, ում աշխատանքը խաչմերուկում է շրջակա միջավայրը և արվեստային հետազոտությունը: Նա դասախոսում է Չիկագոյի համալսարանի սլավոնական լեզուների և գրականությունների, շրջակա միջավայրի, աշխարհագրության և ուրբանիզացիայի բաժիններում: Նա հեղինակել է «Էկոցիդը Ուկրաինայում» գիրքը, որն անդրադառնում է Ուկրաինայի դեմ Ռուսաստանի պատերազմի միջավայրային հետևանքներին:

Արփի Մանուսյան

Արփի Մանուսյանը սոցիոլոգ է, «Սոցիոսկոպ» հետազոտական կազմակերպության նախագահը: Նրա մասնագիտական հետաքրքրությունների կենտրոնում են հայաստանյան քաղաքացիական շարժումները, հանրային և քննադատական սոցիոլոգիան, գենդերային հարցերը: Մանուսյանի աշխատանքները ուսումնասիրում են մարդու իրավունքները, սոցիալական փոփոխության մեխանիզմները և անհատի ու հանրության փոխազդեցությունը՝ սոցիալական և բնապահպանական պրոցեսների համատեքստում:

Դասընթացավարներ

Անի Խաչատրյան

Անի Խաչատրյանը բնապահպան է և արշավային ուղեկցորդ, 2013 թվականից «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնության անդամ: Նա իրականացնում է բնապահպանական թեմաներով մի շարք միջոցառումներ՝ փառատոններ, աշխատարաններ և այլ ձևաչափերով նախաձեռնություններ, որոնց առանցքում բնապահպանական հիմնախնդիրներն են՝ կենսաբազմազանության կորստի, հանքարդյունաբերության, ապօրինի անտառահատումների և այլ մարտահրավերների հասցեագրումը:

Տինատին Լոբժանիձե

Տինատին Լոբժանիձեն սոցիոլոգ է, նրա հետազոտական աշխատանքի առանցքում միջավայրային մարդաբանությանն ու էկոլոգիական անհանգստությանն են: Ներկայումս Լոբժանիձեն սովորում է Ժամանակակից վրացական պատմության մագիստրոսական ծրագրում: Նա ծագումով Ռաչայից է՝ Վրաստանի լեռնային, սակավաբնակ տարածաշրջանից, որը կանգնած է լուրջ բնապահպանական մարտահրավերների առաջ, նրա անձնական փորձառությունը խորապես փոխկապակցված է նրա ակադեմիական հետաքրքրություններին:

Աղունիկ Տեր-Ստեփանյան

Աղունիկ Տեր-Ստեփանյանը ճարտարապետ է, ում աշխատանքը ուսումնասիրում է ուրբան միջավայրերը և ճարտարապետական ժառանգությունը՝ սոցիալական և ֆեմինիստական տեսանկյուններից: Նրա հետազոտությունը և նախագծերը կենտրոնանում են ուրբան տարածքներում ներառականության և ապահովության հիմնահարցերին, մասնավորապես՝ քաղաքային պլանավորման գործում կանանց ներգրավվածությանը:

Գնդակցություն

Նանոր Հովհաննիսյան

Նանոր Հովհաննիսյանը «Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիայի» թիմի անդամ է, սովորել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի Անգլերեն և հաղորդակցություն բաժնում: Նրա հետազոտական հետաքրքրությունների շարքում են կլիմայական ուսումնասիրությունները՝ մասնավորապես կլիմայական փոփոխության և ֆեմինիստական ուրբանիզմի խաչմերուկները:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17 | ՈՒՐԲԱԹ

հանցանամ

10:00 | Մեկնում Մատենադարանից դեպի Woods կենտրոն

10:30 —11:00 | Մասնակիցների գրանցում

11:00—11:30 | **Տիգրան Ամիրյան** | Գետի իրավունքը. ողջույնի խոսք

11:30—12:30 | **Մարի Չաքրյան** | Խորհրդային սպիներից դեպի կայուն լուծումներ. վերաիմաստավորելով Հայաստանի բնապահպանական ապագան

12:30—13:30 | **Կանաչ և կապույտ** | մասնակիցների ներկայացում

13:30—14:30 | Ճաշի ընդմիջում

14:30—15:30 | **Արսեն Աբրահամյան** | Կոնդ. ցանցային ճարտարապետության բնական պատմությունը

15:30—16:00 | Սուրճի ընդմիջում

16:00—16:30 | **Հարություն Թումաղյան** | Սևանիկ. արվեստ և շրջակա միջավայր

16:30—17:30 | **Կանաչ և կապույտ** | Խմբային աշխատանք

17:30 | Մեկնում Woods կենտրոնից դեպի Մատենադարան

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18 | ՇԱԲԱԹ

հանդիպում

10:00 | Մեկնում Մատենադարանից դեպի Woods կենտրոն

10:30 —11:00 | Մասնակիցների գրանցում

11:00—12:00 | **Տիգրան Ամիրյան և Արսեն Աբրահամյան** | Կապույտ Երևան

12:00—13:00 | **Դամլա Բարը** | Ստամբուլի ջրային ժառանգությունը

13:00—14:00 | Ճաշի ընդմիջում

14:00—15:00 | **Օլիվիե Փեսթիոն** | SAMBRE2030. դեպի գետի իրավական ճանաչում

15:00—15:30 | Սուրճի ընդմիջում

15:30—17:00 | **Էվիյա Հովհաննիսյան** | Ենթակառուցվածքային նախագծերը և բնական լանդշաֆտի գաղութացումը Խորհրդային Հայաստանում

17:00—17:30 | **Դարիա Ցիմբալյուկ** | Էկոցիդը Ուկրաինայում

17:30—18:30 | **Կանաչ և կապույտ** | Խմբային աշխատանք

18:30 | Մեկնում Woods կենտրոնից դեպի Մատենադարան

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19 | ԿԻՐԱԿԻ

հանցանամ

10:00 | Մեկնում Մատենադարանից դեպի Woods կենտրոն

10:30 —11:00 | Մասնակիցների գրանցում

11:00—12:30 | **Արփի Մանուսյան** | Բնապահպանական շարժումները և դրանց փոխակերպումները Հայաստանում

12:30—13:30 | **Անի Խաչատրյան** | Բնապահպանական շարժումներ և Ամուլսար

13:30—14:30 | Ճաշի ընդմիջում

14:30- 15:00 | **Տինատին Լոբժանիձե** | Ջրային շրջանակներ

15:00—15:30 | **Նանոր Հովհաննիսյան** | Մամուռ. ուրբան և հիդրո-ֆեմինիստական զինի ներկայացում

15:30—16:00 | **Աղունիկ Տեր-Ստեփանյան** | Ինպիսի՞ն կլիներ քաղաքը, եթե նախագծվեր՝ հաշվի առնելով կանանց փորձառությունը

16:00—16:30 | Սուրճի ընդմիջում

16:30—17:30 | **Ծրագրի ամփոփում**

17:30 | Մեկնում Woods կենտրոնից դեպի Մատենադարան

«Բարդ անցյալի դպրոց. շրջակա միջավայր» ծրագրի շրջանակներում ցանկացած հարցի և/կամ աջակցության անհրաժեշտության դեպքում, խնդրում ենք կապ հաստատել CSN Lab-ի թիմի անդամների հետ՝

Նանոր Հովհաննիսյան հեռ՝ +37477868094, nanor@csnlab.net

Արսեն Աբրահամյան հեռ՝ +37498424757, arsen@csnlab.net

CSN Lab-ի գործունեությունն ուղղված է Հայաստանում մշակութային երկխոսության, ժողովրդավարության և խաղաղության հաստատմանը: Մեզ համար անընդունելի են սեքսիզմը, ռասիզմը, հոմոֆոբիան, ատելությունը և անհանդուրժողականության այլ դրսևորումները:

«ԲԱԴ»-ը CSN Lab-ի ամենամյա նախագիծն է, որն ալտերնատիվ կրթության ճանապարհով նպաստում է բարդ անցյալի շուրջ հանրային խոսույթի ձևավորմանը: Այն իրականացնում է Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիան (CSN Lab) Դանիական մշակութային ինստիտուտի (DCI) «Նոր ժողովրդավարության հիմնադրամ» (NDF) նախագծի և «Հայաստանում կանանց հիմնադրամի» (WFA) աջակցությամբ: